«ՍԱՀՄԱՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ

ՄՈՎՍԵՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Անորոշությունը քաղաքակրթության լայն ճանապարհի վրա ոտք դրած մարդկանց մշտական ուղեկիցն է:
Ա. Թոյնբի[1]

Ժամանակակից աշխարհի ամենակարևոր բնութագրումներն այսպես թե այնպես կապված են գլոբալացման հետ: Պատճառն այն է, որ միասնական աշխարհի կայացման գործընթացները հարուցում են հիմնախնդիրներ, որոնցից չի կարող զերծ մնալ ժամանակակից լինելու հավակնություն ունեցող որևէ հասարակություն կամ պետություն: Այժմեականության գլխավոր հիմնահարցերը, հասարակական փոխակերպումների և մշակույթների փոխներթափանցման միտումներով պայմանավորված, արտահայտվել են «քաղաքակրթությունների բախման»[2], «պատմության ավարտի»[3], «մշակույթի սիներգետիկայի»[4] և այլ հայեցակարգերով, որոնք բոլորն էլ արձանագրում են մեր օրերում մշակութային երևույթների արդիականությունը և առաջնայնությունը: Ս. Հանտինգտոնն այդ կապակցությամբ նշում է. «Նոր աշխարհում առավել ընդգրկուն և կարևոր կոնֆլիկտները ծագելու են ոչ թե սոցիալական խավերի, աղքատների և հարուստների, այլ մշակութային տարբեր ինքնություն ունեցող ժողովուրդների միջև»[5]:

Կարևոր է արձանագրել, որ այդ համատեքստում «մշակույթ» հասկացությունը վերաբերում է ոչ թե արվեստին և արհեստին, այլ կենցաղային-առօրեական հարաբերություններից մինչև քաղաքացի-պետություն կապերը կարգավորող նորմերի ամբողջությանը, լայն իմաստով՝ տվյալ մարդկանց (էթնոսի, ազգի կամ հասարակության) **կենսագործունեությանը և դրա լեգիտիմությունը, անվտանգությունը, հարմարավետությունը, զարգացման հնարավորությունը ապահովող պայմանների ամբողջությանը:**

Պատկերավոր ասած՝ մարդն իր պատմության սկզբնամասում,

---

[1] **Тойнби А. Дж.** Постижение истории. М.: Прогресс, 1991, с. 304.

[2] Տե՛ս **Хантингтон С.** Столкновение цивилизаций. М.: АСТ, 2003:

[3] Տե՛ս **Фукуяма Ф.** Конец истории и последний человек. М.: АСТ, 2004:

[4] Տե՛ս **Князева Е. Н.** Синергетический вызов культуре // Синергетическая парадигма. Многообразие поисков и подходов. М.: Прогресс-Традиция, 2000:

[5] **Хантингтон С.**, նշվ. աշխ., էջ 24-25:

հայտնվելով անհասկանալի և անկառավարելի իրականությունում (բնություն) և չհարմարվելով դրան, ստեղծեց սեփական աշխարհը՝ մշակութային իրականությունը, որը, հակադրվելով բնությանը, պետք է ներառեր այնպիսի երևույթներ, որոնք իրականությունը և դրանում մարդու գոյությունը (կյանքը) կդարձնեին հասկանալի, կառավարելի, կանխատեսելի, անվտանգ և այլն:

Մշակույթի ձևավորումն առհասարակ կապված է հետևյալ երևույթի հետ. անվերջ, **անսահման** և անհայտ ծագում ունեցող բնությանը մարդը հակադրեց իր կողմից ստեղծվող մշակույթը: Դրանով մշակույթը ուրվագծեց իրականության մեջ մարդու **կենսագործունեության սահմանը** ինչպես ֆիզիկական իմաստով (այն տարածքը, որը, ի հակադրություն անմշակ բնության, մշակում էր մարդը), այնպես էլ հոգևոր իմաստով՝ մարդու կողմից ընկալված, հասկացված բնական երևույթները (օր.՝ կրակը): «Մարդու և բնության երկխոսությունը կարող է ընթանալ որպես սահմանի փնտրտուք, այն սահմանի, որին կարող է հասնել մարդը բնության հետ հարաբերություններում՝ ներխուժելով նրա օրենքների և գաղտնիքների մեջ: Այդ **սահմանը** խորհրդանշում է մարդու կեցության չափը և վիճակը, որն ընդունված է անվանել **մշակույթ**»[6]: Ի դեպ, եթե սկզբնական շրջանում այս սահմանն անցնում էր մշակույթի և ոչ մշակույթի (անմշակ բնության) միջև, ապա ժամանակի ընթացքում ինքը՝ մշակույթը, դառնում է խիստ բազմազան, ինչի պատճառով սահմանը ներթափանցում է մշակույթի համակարգ՝ այլևս սահմանազատելով մշակույթը մեկ այլ մշակույթից: Որպես մարդու ինքնադրսևորման բնագավառ[7], մշակույթն ի սկզբանե դատապարտված է անվերջ բազմապատկվելու այն պատճառով, որ ունի **իմաստաստեղծ** գործառույթ. մշակույթի միջոցով է մարդը սկսել իմաստավորել աշխարհն ու իր կյանքը, ընդ որում նա ոչ այնքան բացահայտել է այդ իմաստը, որքան ստեղծել, հորինել:

Քանի որ սկզբնական շրջանում մշակույթը ձևավորվում է մեծ, անսահման բնության հետ հակադրության մեջ, մարդու կեցությունը խարսխվում է կյանքին տիեզերական չափումներ և բովանդակություն հաղորդող նույնքան մեծ իմաստների վրա՝ պատմական առաքելություն, անմահություն, արդարություն, ազատություն և այլն: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ «մշակույթում ընթանում է մեծ պայքար հավերժության և ժամանակի միջև, դիմադրություն ժամանակի կործանարար ազդեցությանը: Մշակույթը պայքարում է մահվան դեմ, թեպետ անկարող է հաղթել նրան իրականում»[8]: Այս պայմաններում օրինա-

---

[6] **Быстрова А. Н.** Проблема границ в культуре // "Омский научный вестник", 2013, № 2 (116), с. 256.

[7] Տե՛ս **Библер В. С.** М. М. Бахтин, или поэтика культуры (На путях к гуманитарному разуму). М., 1991, էջ 289-290:

[8] **Бердяев Н. А.** Философия неравенства. М., 2012, с. 249.

չափ է, որ մշակույթի ակունքներում այդպիսի երևույթներ են՝ «մեծ իմաստներ», որոնք հակադրվում են կյանքն անիմաստ դարձնող բնական մահվան անխուսափելիությանը (անհրաժեշտությանը)՝ ազատություն, ընտրություն, արժեք, առաքելություն և այլն:

Սակայն ժամանակի ընթացքում մշակույթն ինքն իր մեջ բացահայտում է նոր իմաստներ, նպատակներ և արժեքներ, որոնք լայն իմաստով առաջին հերթին մարդու վարքային-աշխարհայացքային ինքնադրսևորումների հերթական արտահայտությունն են: Բայց դա նշանակում է, որ «մշակույթում մարդը երկատվում է՝ հանդես գալով որպես իր մեկ այլ **հնարավորություն.** ոչ միայն որպես այն, ինչ ինքն է, այլ նաև այն, ինչ ինքը կարող էր լինել»[9]: Այս ճանապարհով տրոհվող և ավելի բազմազան դարձող մշակութային համակարգում ձևավորվում են նոր մշակույթներ, որոնք հավասարարժեք են այն իմաստով, որ բոլորն էլ սոցիոմշակութային կյանքի կազմակերպման այլընտրանքային մոդելներ են:

Բայց մարդկային մշակույթում բազմաթիվ տարբեր մշակույթների առաջացումը հանգեցնում է ոչ միայն քանակական բազմազանության, այլև այն իրավիճակի, որ մարդը հայտնվում է բազմամշակութային իրականությունում, որի պայմաններում մշակույթի սահմանից այն կողմ այլևս ոչ թե բնությունն է, այլ՝ մեկ ուրիշ մշակույթ: Հենց մշակույթի էվոլյուցիոն զարգացումն է բերում նրան, որ սահմանը, որը ժամանակին ընկած էր մշակույթի և բնության միջև, ներթափանցում է մշակույթի համակարգ ու զատում մշակույթները: Սա նաև նշանակում է, որ ժամանակին ձևակերպված մեծ իմաստները իրենց հերթին տրոհվում են ավելի մասնավոր դրսևորումների. մետաֆիզիկական ազատությունը՝ խոսքի, վարքի, մտքի, ընտրության ազատության, առաքինությունը՝ բարության, կամքի, հավատարմության և այլն, արդարությունը՝ արդարադատության, վրեժի և այլն, հայրենիքը՝ ծննդավայրի, երջանկությունը՝ ուրախության, բարեկեցության, հարմարավետության և այլն: «Ազգային պետությունների և կայսրությունների փոխարեն, որոնք միավորում էին մարդկանց մեծ իմաստների ներքո, գալիս են ցանցային համակարգեր, որոնց պայմաններում մարդիկ պետք է տրոհվեն առավելագույն քանակությամբ փոքր խմբերի»[10]:

Մարդկանց ձգտումը՝ կազմակերպելու իրականությունն իրենց պատկերացումներին, ցանկություններին և նպատակներին համապատասխան, հանգեցնում է սահմաններ ստեղծելու գործընթացին: Որքան բազմազան և անգամ իրարամերժ են այդ պատկերացումները, այնքան շատ են սահմանները: Վերջիններս որքան առանձնացնում են մշակութային տարածությունները մեկը մյուսից, այնքան էլ արդիակա-

---

[9] **Эпштейн М.** Философия возможного. СПб.: Алетейя, 2001 (http://www.emory.du/INTELNET/fv32.html)

[10] **Хантингтон С.,** նշվ. աշխ., էջ 51:

նացնում են դրանք՝ փոխճանաչման, փոխհարստացման առումով և ավելի կարևոր՝ **գոյաբանական** իմաստով: «Յուրայինը» և «օտարը», «եսը» և «նա», «մենքը» և «նրանքը», «աշխարհիկը» և «հոգևորը» գոյություն չունեն առանձին և ինքնուրույն, այլ միայն մշակութային սահմանների շնորհիվ առաջացող և այդ սահմաններում հաղորդակցության ժամանակ արդիականացող երևույթներ են: «Քանի որ սահմանը նշանային համակարգերի անհրաժեշտ մաս է, և որևէ «մենք» չի կարող լինել, եթե չկան «նրանք», ուրեմն ... «բարբարոսը» ստեղծված է քաղաքակրթության կողմից և նույնքան ունի դրա կարիքը, որքան քաղաքակրթությունը՝ բարբարոսի»[11]:

Սահմանը դառնում է մշակույթի ամենալարված, իմաստաստեղծ հատվածը, որը պայմանավորում է արտաքին աշխարհի հետ մշակույթի հաղորդակցությունը: Եթե սահմանը դինամիկ է, ապա մշակույթի միջուկը իներցիոն է, և փակ հասարակություններում, որոնց դեպքում արտաքին հաղորդակցությունը հասցված է նվազագույնի, և ներքին մշակույթը միօրինակ է (չկա բազմամշակութային իրավիճակ, հետևաբար չկան սահմաններ), մշակութային երկխոսության բացակայության պայմաններում և պատճառով վերարտադրվում է մշակույթի իռացիոնալ միջուկը՝ արքետիպերի, կարծրատիպերի, ավանդույթների ամբողջությունը: Ընդ որում, այլ մշակույթի հետ երկխոսության բացակայության դեպքում այդ վերարտադրությունը չի կարող ավելի շատ և խոր իմաստներ ու արժեքներ պարունակել, բայց կարող է իմաստազրկվել և արժեզրկվել: Թերևս սա է մշակութային անկման պատճառներից մեկը, երբ ներքին և արտաքին ռացիոնալ երկխոսության բացակայությունը հանգեցնում է մշակույթի բովանդակության իմաստազրկման ու արժեզրկման, բովանդակության պակասը լրացվում է ուռճացմամբ և այլն: Միևնույն ժամանակ չի կարելի մշակույթի սահմանը նույնացնել մարգինալության հետ, և եթե մշակույթը գոյություն ունի միայն երկու մշակույթների սահմանին, դեռ չի նշանակում, որ այն ստանում է մարգինալ երևույթի գոյաբանական կարգավիճակ:

Քանի որ «մշակույթը չունի սեփական ներքին տարածք և ամբողջությամբ գտնվում է սահմանների վրա»[12], ուստի սահմաններից օտար, կտրված մշակութային ցանկացած երևույթ կորցնում է իր բովանդակությունն արտահայտելու հնարավորությունը և պայմանները: Եվ հակառակը, սահմանին է սկսվում մշակույթի, դրա արժեքային միջուկի և իմաստների ինքնառեֆլեքսիան: «Նման մոտեցումը մշակութաստեղծ գործունեության հիմքում տեսնում է երկխոսությունը, որը արթնացնում է մշակույթի ինքնագիտակցությունը, թույլ է տալիս ստեղծել մշակութային նոր ձևեր և իմաստներ»[13]: Հետևաբար, սահմանին ընթացող

---

[11] **Лотман Ю. М.** Семиосфера. СПб.: Искусство-СПб, 2000, с. 267.

[12] **Бахтин М. М.** Эстетика словесного творчества. М.: Искусство, 1979, с. 284.

[13] **Аполлонов И. А.** Мультикультурализм и проблема границ культуры // "Ярослав-

երկխոսությունը ոչ միայն մշակույթի արդիականացման ձև է, այլև առհասարակ՝ մշակույթի **գոյության** ձև: Մշակույթների համակեցությունը ենթադրում է դրանց միաժամանակյա գոյության յուրահատուկ՝ երկխոսութային ձև, որը դրսևորվում է այլ մշակույթի ստեղծագործական, իմաստային հասկացման մեջ: Հասկացման համար անհրաժեշտ է «ուրիշ»-ը. պարտադիր պայման է, որ հասկացողը ժամանակային, տարածական և մշակութային առումներով դուրս գտնվի այն բանից, ինչ ուզում է հասկանալ[14], որովհետև ինչպես անհատը, այնպես էլ մշակույթը այլոց միջոցով է սկսում գիտակցել, բացահայտել և ճանաչել ինքն իրեն:

Միայն ուրիշ մշակույթների «հարցադրումներում» են նորից ծնվում և արդիականանում մշակույթների ու ամբողջ դարաշրջանների իմաստային շերտերը: «Մշակույթը միայն այլ մշակույթի աչքերում է բացահայտում իրեն ավելի ամբողջական և խորը (բայց ոչ ամբողջությամբ, որովհետև գալու են այլ մշակույթներ, որոնք կտեսնեն և կհասկանան ավելի շատ): Իմաստը բացահայտում է իր բովանդակային խորությունը հանդիպելով և հարաբերվելով մեկ այլ՝ օտար իմաստի հետ, նրանց միջև սկսվում է երկխոսություն, որով հաղթահարվում է այդ իմաստների և մշակույթների միակողմանիությունը և մեկուսացվածությունը»[15]: Դեռ ավելին, երկխոսությունը միշտ առաջանում է ուրիշի գոյության **ենթադրության**, այդ գոյության բարոյական արդարացվածության և մասնակի ճշմարտացիության մեջ: Երկխոսության հիմնական գաղափարը ձևակերպված է Մ. Բախտինի հայտնի բանաձևում. «Միայն պատասխանելով ինձ ուղղված «դու»-ին՝ ես դառնում եմ «ես»»[16]:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ առավել արդյունավետ է մշակույթների **ռացիոնալ** երկխոսությունը, որն իրականանում է համամարդկային ռացիոնալ-տրամաբանական լեզվով[17]: Այստեղից բխում է, որ սահմանը, որտեղ ընթանում է բուն երկխոսությունը, հանդես է գալիս որպես մշակույթների փոխհարաբերության միասնական ռացիոնալ դաշտ: Հնարավոր է, որ մշակութային բազմազանության աճի ժամանակակից պայմաններում գլոբալացումը, որպես օբյեկտիվ օրինաչափություն, կծառայի «աշխարհայացքային և վարքագծային հիմքերով քաղաքակրթությունների փոխնմանեցմանը»[18] և կստեղծի մշակույթների ռացիոնալ երկխոսության համար միասնական դաշտ:

Ակնհայտ է, որ ամբողջ այս երկխոսությունը ծավալվում է մշա-

ский педагогический вестник", 2018, № 1, с. 168.

[14] Տե՛ս **Бахтин М. М.** К вопросам самосознания и самооценки. // Бахтин М.М. Собрание сочинений. Т. 5. М., 1996, էջ 66:

[15] **Бахтин М. М.** Эстетика словесного творчества. с. 354.

[16] Նույն տեղում, էջ 369:

[17] Տե՛ս **Հր. Գ. Շաքարյան**, Փիլիսոփայական-մեթոդաբանական հիմնահարցերը ժամանակակից հայ կրթամշակութային համակարգում // Աշխարհայացքայինը ժամանակակից հայ կրթամշակութային համակարգում. Եր., Եր. համ. հրատ., 2002, էջ 14:

[18] **Назаретян А.** «Столкновение цивилизаций» и «Конец истории» // "Общественные науки и современность". 1994, № 6, с. 142.

կույթի սահմանին, որն այս պայմաններում յուրահատուկ նշանակություն է ստանում նաև մարդու (էթնոսի, ազգի) համար: Բանն այն է, որ սահմանին ծավալվող ստեղծագործական երկխոսությունը ոչ միայն **համաժամանակյա** է դարձնում երկխոսության սուբյեկտ հանդիսացող մշակույթները (ինչից ելնելով կարելի է խոսել մշակույթների հորիզոնական և ուղղահայաց՝ տարածական և ժամանակային, երկխոսությունների մասին), այլև արդիականացնում է մշակույթի սուբյեկտին՝ մարդուն, որն այս դեպքում հանդես է գալիս ոչ թե որպես տվյալ սոցիոմշակութային մոդելի կրող, այլ դրա ստեղծող և ստեղծագործաբար վերապրող:

Սահմանին գտնվելու, ծավալվելու և առավել ակտիվ գործելու հետ համահունչ է մշակույթի **սահմանապահ** գործառույթը[19], որը դրսևորվում է մշակութային օտար (տարբերվող, թշնամական) ձևերի հայտնաբերման և տվյալ համակարգ դրանց ներթափանցման փորձերի արձանագրման և կանխարգելման մեջ: «Բնականության և բանականության սահմանները տարորոշող և սահմանապահ կարգված մշակույթի գործերը այնքան էլ բարեհաջող չեն: Պատմական իրողություն է, որ բնական կեցությունից դուրս և տարածաժամանակային նոր չափումներ ունեցող սոցիալական աշխարհում ապրելու համար մեր հեռավոր նախնիները մի անբացատրելի խենթությամբ ձեռնարկեցին հանրային կյանքի բեմականացման մշակութային մի նախագիծ, որը կապահովեր մարդու ոգեղեն պարփակվածությունը: Այս իմաստով մշակույթը ոչ միայն ապաստարան է, որտեղ կարող են տնավորվել հաճույքի սկզբունքից ինքնակամ հրաժարվածները, այլև, ինչպես արդեն նշեցինք, սահմանապահ է, մի դիտապահակ նավազ, որն աչալրջորեն հսկում և ժամանակին ահազանգում է մարդկային աշխարհի հնարավոր ձևախեղումների մասին, և հենց ինքն էլ ձեռնարկում անսարքությունների շտկումը»[20]: Նշված օրինաչափությունն ուսումնասիրելու մեթոդաբանական առումով արդյունավետ մոտեցումներից է սիներգետիկան, որի հիմնական հասկացությունները՝ կարգ, համակարգ, քաոս, բիֆուրկացիա և այլն, թույլ են տալիս պարզորոշ նկարագրել մշակույթը որպես սահմանապահ: Սիներգետիկական մոտեցման շրջանակներում մշակույթը դիտարկվում է որպես բարդ, ինքնակազմակերպվող, ոչ գծային համակարգ[21], որն իրենից դուրս գտնվող այլ համակարգերի (մշակույթների) հետ շփումը դիտարկում է մի կողմից որպես էնտրոպիայի (քայքայման, քաոսի) ավելացման հնարավորություն, ինչը նշանակում է, որ դրանց ներգործությունը պետք է հնարավորինս նվազեցվի, իսկ մյուս կողմից՝ որպես ինքնակազմակերպման ա-

---

[19] Տե՛ս **Է. Հարությունյան,** Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018, էջ 12:

[20] Նույն տեղում:

[21] Տե՛ս **Князева Е. Н**. Синергетический вызов культуре // Синергетическая парадигма. Многообразие поисков и подходов. М.: Прогресс-Традиция, 2000, էջ 243-261:

վելի բարձր մակարդակի հասնելու հնարավորություն: Այստեղ մշակույթը դրսևորվում է որպես **դիսիպատիվ**[22] համակարգ, և քանի որ այլ մշակույթի «նշանները» արձանագրվում, ճանաչվում, ընդունվում, մերժվում կամ վերարժևորվում են արդեն սահմանին, դրանով իրացվում են մշակույթի համար կարևոր երկու գործոններ. նախ, ապահովվում է արտաքին միջավայրի հետ մշակույթի կենսունակությունն ապահովող անհրաժեշտ շփումը, իսկ մյուս կողմից՝ անփոփոխ է մնում մշակույթի իռացիոնալ միջուկը, որով պայմանավորված են մշակույթի ինքնատիպությունը, միասնականությունը և ամբողջականությունը: Հետևաբար, երկխոսությունը, մշակույթի գոյության ձև լինելուց բացի, դառնում է նաև ինքնաճանաչողության հնարավորություն, որի ընթացքում բացահայտվում է երկխոսության սուբյեկտ հանդիսացող մշակույթների «անհատականությունը»:

Ճանաչողական «ծանրաբեռնվածություն» ունի նաև մշակույթի սահմանը, որտեղ արձանագրվում է ուրիշի **գոյությունը, և** իրականանում է դրա **հասկացումը**: Բայց մշակութային փոխճանաչման մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ դա դասական իմաստով սուբյեկտից անկախ գոյություն ունեցող օբյեկտի ճանաչողություն չէ: Դա ավելի շուտ ստեղծագործական ճանաչողություն է, որի ընթացքում օբյեկտը ոչ թե նախապես տրված է, այլ առաջանում է իմացության ընթացքում: Բանն այն է, որ մշակութային ֆենոմենները միայն ուրիշի հարցադրումներում են բացահայտում իրենց իմաստները, ընդ որում՝ ճանաչողական գործընթացի տարբեր սուբյեկտներ նույն մշակույթում բացահայտում են տարբեր իմաստներ: Սա նշանակում է, որ այդ իմաստները ոչ թե կան, այլ ստեղծվում են հենց երկխոսության և ճանաչողության ընթացքում: Եվ հակառակը՝ երկխոսության սուբյեկտները ոչ միայն բացահայտում են այլ մշակույթն իրենց համար, այլև իրականացնում են ստեղծագործական ինքնաճանաչողություն, այսինքն՝ իրենք էլ են նորովի բացահայտվում սեփական և ուրիշի «աչքերում»:

Ժամանակակից աշխարհին բնորոշ նշված գլոբալ գործընթացները մեծ կարևորություն են հաղորդում «երկխոսություն» և «սահման» հասկացությունների ուսումնասիրությանը: Քանի որ սեփական մշակույթի հետ կապը ոչ մեկին երաշխավորված չէ[23], ուստի առաջանում է ոչ միայն ուրիշ, այլ նաև սեփական մշակույթին ստեղծագործաբար հաղորդակից լինելու անհրաժեշտությունը և, որպես հետևանք, սեփա-

---

[22] Դիսիպատիվ են այն համակարգերը, որոնք ունակ են կա՛մ ցրել ավելորդ և օտար ամեն ինչ, կա՛մ դարձնել այն սեփական բովանդակության մաս՝ վերաիմաստավորման և վերարժևորման միջոցով: Լայն իմաստով բոլոր բարդ համակարգերը դիսիպատիվ են: Պարզ է, որ մշակութային հաղորդակցության պարագայում խոսքը ոչ թե ֆիզիկական էներգիայի փոխանցման մասին է, այլ առաջին հերթին՝ նշանների և խորհրդանիշների:

[23] Տե՛ս **Межуев В. М.** Философия культуры в системе современного знания // Личность. Культура. Общество. 2004, Вып. 2 (22), էջ 135 – 155:

կան և օտար մշակույթների միջև սահմանի որոշակիացումը: Այդ ստեղծագործական փոխճանաչման նպատակներից մեկն էլ տարբեր մշակույթների միջև սահմանների հստակեցումն է: Մշակութային բազմազանության պայմաններում հայտնված մարդու համար կենսական նշանակություն է ձեռք բերում ոչ միայն այլ մշակույթի ճանաչումը, այլև սեփական և օտար մշակույթի միջև սահմանի հստակեցումը: Ընդ որում, մի դեպքում դա արվում է՝ ելնելով պատմական անհրաժեշտությունից, մեկ այլ դեպքում այդ հստակեցումը դետերմինավորված է միայն մարդու (էթնոսի, ազգի) ազատությամբ: Սա նշանակում է, որ մշակույթի սահմանը, պատկերավոր ասած, չի սահմանվում մեկընդմիշտ, այլ ենթակա է փոփոխության: Օրինակ՝ հայ մշակույթի պատմական զարգացման ընթացքում նկատելի է այն օրինաչափությունը, որ տարբեր ժամանակահատվածներում և տարբեր պատճառներով այդ մշակույթի սահմաններն ընդլայնվել և նեղացել են, այն պարբերաբար հայտնվել է օտար մշակութային միջավայրում, ինչի հետևանքով ձեռք է բերել այնպիսի հատկություններ, ինչպիսիք են, օրինակ, **ճկունությունը** և **հարմարվողականությունը:**

Որքան ոչ ռացիոնալ, ոչ երկխոսութային բնույթի են մշակույթների հարաբերությունները, այնքան ավելի են արդիականանում մշակույթի ինքնապաշտպանական շերտերը, և սրվում է «յուրայինի» և «օտարի» հակադրությունը: «Օտարն» այս դեպքում, որպես կանոն, դառնում է «թշնամի», ցանկացած «ուրիշ»՝ վտանգավոր: Սա ավելի հատուկ է էթնիկական, քան թե ազգային մշակույթին, քանի որ առաջինի դեպքում գործ ունենք շեշտված **ավանդականության** և **խմբային բնույթի** հետ: Այստեղ անհատը տարրալուծված է համայնքի մեջ, և ստեղծված են իռացիոնալ երևույթների տարածման բարենպաստ պայմաններ: Էթնիկական մշակույթը, ունենալով տարածական բնութագրություն, միևնույն ժամանակ դուրս է ժամանակային չափումներից, ինչն ուղղակի դրա ավանդականության հետևանքն է[24]: Սա նշանակում է, որ էթնիկական մշակույթի դեպքում ավելի մեծ հավանականությամբ երկխոսությունը կստանա բախման, հակամարտության, քան ռացիոնալ փոխհասկացման տեսք: Թերևս սա է պատճառը, որ, օրինակ, հայ-ադրբեջանական հակամարտությունը, որն ըստ էության էթնոքաղաքական կոնֆլիկտ է, չի կարող լուծվել այն մակարդակում, որում առաջացել է, և պետք է տեղափոխվի այլ՝ ավելի ռացիոնալ և ինստիտուցիոնալ մակարդակ, որտեղ երկխոսության սուբյեկտները ոչ թե էթնիկական մշակույթներն են, այլ քաղաքակրթական երևույթներ՝ օրենքը, իրավունքը, պետությունը և այլն:

Փիլիսոփայական հետաքրքրությունը մշակույթի սահմանի և դրա գոյաբանական ու իմացաբանական տեսանկյունների նկատմամբ չի

[24] Տե՛ս **Межуев В. М.,** նշվ. աշխ.:

կարող ամբողջական լինել առանց մարդու և նրա հոգևոր աշխարհի հետ ունեցած առնչությունները հաշվի առնելու: Այս իմաստով կարևոր է «սահմանային կեցություն» հասկացությունը, որի օգնությամբ ցույց է տրվում, որ մարդու հոգևոր աշխարհն առհասարակ առաջանում է կեցության սահմանին, որից այն կողմ նրա չկեցությունն է, բայց ոչ թե «ոչնչի» իմաստով, այլ մարդու այլակերպության, «ես»-ի մեկ այլ հնարավորության, որը, նախապես թվալով օտար, երկխոսության ընթացքում բացահայտում է իր բարոյական արդարացվածությունը և մասնակի ճշմարտացիությունն այնպես, որ ակնհայտորեն բացառում է մարդու ամբողջական լինելը՝ մեկ մշակույթին պատկանելով, ինչքան էլ վերջինս ավանդաբար համարվում է բնական և օրինաչափ: Սահմանի հումանիստական էությունը, այսպիսով, բացահայտվում է դրա երկու իմաստների մեջ. սահմանը որպես հնարավորի, թույլատրելիի, ընդունելիի չափ, և սահմանը որպես մի բան, որը պետք է հաղթահարվի՝ նոր փորձ, նոր իմաստներ ձեռք բերելու համար: Մարդկային կեցության ամբողջականությունը, այդքանով հանդերձ, դառնում է ոչ թե մեկ մշակույթի խնդիր, այլ մշակույթների երկխոսության առարկա և նպատակ, երբ «ես»-ի իմաստը բացահայտում է «ուրիշ»-ը, որին, իր հերթին, անհրաժեշտ է «ես»-ը որպես «ուրիշ»: Ըստ էության, սահմանն այն բանի գիտակցումն է, որ մարդը (մշակույթը) արձանագրում է իր գոյությունը միայն ուրիշ մարդու (մշակույթի) հետ համակեցություն մեջ:

Սահմանը կարող է մեկնաբանվել նաև որպես սոցիոմշակութային տարածքի ձևավորման հիմք, քանի որ մարդու ողջ կենսագործունեությունն այսպես թե այնպես կապված է սահմանի հետ: Դեռ ավելին, հենց մարդու գոյությունն ինքնին հանդես է գալիս որպես **սահմանային** գոյություն կամ իրավիճակ, որտեղ մարդ անընդհատ բախվում է իր և ուրիշի, յուրայինի և օտարի, ինչպես նաև հավերժի և ժամանակավորի, աշխարհիկի և հոգևորի, անցյալի և ներկայի միջև սահման գծելու և այն հատելու անհրաժեշտությանը: Հենց սահմանին է բացահայտվում նրա կյանքի հոգևոր լարվածության և ծանրաբեռնվածության չափը, որը կարելի է մեկնաբանել որպես աշխարհում (և հատկապես ուրիշի համար) մարդու գոյության, լինելիության չափ:

Բանալի բառեր – *մշակույթ, սահման, իմաստ, ճանաչողություն, երկխոսություն, ռացիոնալություն, ուրիշ, հասկացում, գոյություն, բազմազանություն*

МОВСЕС ДЕМИРЧЯН – *О философско-культурологическом значении понятия «граница».* – В статье утверждается, что формирование границ между естественным и искусственным, своим и чужим изначально присуще человеку, создающему свой собственный мир – мир Культуры – в непонятном и чуждом мире Природы. Изначально граница пролегала между природой и культурой, однако вследствие своей смыслообразующей функции культура стала настолько разнообразной, что граница переместилась внутрь её, разделяя своё и чужое, друга и врага, дозволенное и недозволенное и т.д. Устанавливая границы, культура

становится также своего рода стражем, охраняющим свою территорию. Парадоксальность данной вполне естественной ситуации состоит в том, что культура охраняет то, чего у неё нет, – территорию, поскольку сферой обитания (актуализации, творческого бытия) культуры является граница – место встречи как минимум двух культур. Здесь также начинается диалог, ставший в современном поликультурном мире формой существования культуры.

В статье обосновывается, что феномен границы имеет прямое отношение и к человеку, чей духовный мир вообще возникает на границе бытия и небытия, в так называемой «ситуации пограничного бытия». Небытие в данном случае выступает не как Ничто, а как другое Я, неустранимое вследствие нравственной оправданности своего существования. Этим обосновывается, что целостность человеческого бытия нельзя гарантировать одной-единственной культурой; она становится возможной только на границе культур, где выражается творческое напряжение духовного мира человека. Граница становится мерой определения себя и одновременно тем, что должно быть творчески преодолено.

Ключевые слова: *культура, граница, смысл, познание, диалог, рациональность, другой, понимание, существование, многообразие*

MOVSES DEMIRCHYAN – *The Philosophical-Culturological Significance of the Conception "Border".* – The article asserts that the formation of borders between the natural and the artificial, one's own and another's is originally inherent to a person, who creates his own world – the world of Culture – in an incomprehensible and alien world of Nature. Initially, the border lay between nature and culture, however, due to its sense-forming function, culture became so diverse, that the border, figuratively speaking, moved to the field of culture, becoming a measure of one's and someone else's friend and enemy, allowed and forbidden, etc. By setting borders, culture also becomes a kind of watchman guarding his territory. The paradox of this completely natural situation is that culture protects what it does not have – the territory because the cultural sphere of living (actualization, creative being) is the border – the meeting place of at least two cultures. A dialogue also begins here, which in the modern multicultural world is a form of cultural existence.

The article substantiates the idea, that the phenomenon of the border is directly related to man, because his spiritual world generally arises on the border of being and non-being, in the so-called "situation of borderline being". Non-being, in this case, appears not as Nothing, but as another <me>, which cannot be eliminated due to the moral justification of its existence. This justifies that the integrity of human beings cannot be guaranteed by a single culture, but becomes possible only at the border of cultures, where the creative tension of the spiritual world of a person is expressed. The border becomes a measure of self-determination and at the same time, it must be overcome creatively.

Key words: *culture, border, meaning, cognition, dialogue, rationality, another, understanding, existence, variety*

Ներկայացվել է՝ 25.09.2019
Գրախոսվել է՝ 14.10.2019
Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019